ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 27» մարտ 2017թ. No 981 - Ա

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ «ԶԴՈՐՈՎՅԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԳԼԻԲԵՆԿԼԱՄԻԴ-ԶԴՈՐՈՎՅԵ,
ԳԼԻԲԵՆԿԼԱՄԻԴ, ԴԵՂԱՀԱՏԵՐ 5ՄԳ (50) ՊԼԱՍՏԻԿԵ ՏԱՐԱՅՈՒՄ»
ԴԵՂԻ 30716 ՍԵՐԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդհանուր եւ արտաքին կապերի բաժին
N 2833 27 MAR 2017 ժամ 15:44
Դեղի կարգավիճակ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգի 3-րդ կետը, ինչպես նաև «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի եզրակացությունը, համաձայն որի «Գլիբենկլամիդ-Զդորովյե, գլիբենկլամիդ, դեղահատեր 5մգ (50) պլաստիկե տարայում» դեղի 30716 սերիայի նմուշներում հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետությունում հաստատված սպեցիֆիկացիայից շեղումներ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել Ուկրաինայի «Զդորովյե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գլիբենկլամիդ-Զդորովյե, գլիբենկլամիդ, դեղահատեր 5մգ (50) պլաստիկե տարայում» դեղի 30716 սերիայի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ասլան. 27.03.17 ժ.15-20

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «Նատալի Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված դեղի 30716 սերիայի շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետ հավաքումը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Թոփչյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ